Հաստատում եմ
Տնօրեն
31.08.2023

Դասղեկի թեմատիկ պլանավորում

Դպրոց Վարսերի միջնակարգ

Դասարան 6 -րդ

Դասղեկ Ծ.Աղամյան

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, ,,Մտքի հրավառություն ,, գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

| Դասի համարը | Դասի թեման |
|---|---|
| 1. | Հակահամաճարակային կանոնների պահպանումը |
| 2. | Առողջություն, առողջ ապրելակերպ |
| 3. | Իմ տունը |
| 4. | Իմ ընտանիքը |
| 5. | Մեր երկրի հերոսական անցյալը |

| | |
|---|---|
| 6. | Ինչ է ընկերությունը և բարեկամությունը |
| 7. | Ես և ուրիշները |
| 8. | Վարվելակերպի ոճերը |
| 9. | Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը |
| 10. | Ուսումը և դրա անհրաժեշտությունը |
| 11. | Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին |
| 12. | Ինչ են սովորեցնում մեզ Հ. Թումանյանի հեքիաթները |
| 13. | Ինչպիսինն եմ ես |
| 14. | Մեզ պետք են տարբերություններ |
| 15. | Ինչ է կոնֆլիկտը |
| 16. | Կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբերակներ |
| 17. | Մարդիկ որոնց հանդիպում եմ ամեն օր |
| 18. | Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը |
| 19. | Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը |
| 20. | Ժպիտը մարդու կյանքում |
| 21. | Մաքուր պահենք բնությունը |
| 22. | Ինչ Է ազնվությունը |
| 23. | Հետաքրքրասիրությունը լավ հատկանիշ է թե վատ |
| 24. | Կենդանիները մարդկանց բարեկամներն են |
| 25. | Իմ իրավունքները դպրոցում և պարտականությունները |
| 26. | Աշխատասիրություն |
| 27. | Հայտնի հայ մարզիկներ |
| 28. | Ուժեղ լինել նշանակում Է. . . |
| 29. | Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները |
| 30. | Ում եմ համարում գեղեցիկ մարդ |
| 31. | Արդար,ազնիվ և օրինապահ |
| 32. | Ինչ է ինձ համար դպրոցը |

| | |
|---|---|
| 33. | Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին |
| 34. | Վերջին զանգի խորհուրդը |

Ուսումնադաստիրակչական աշխատանքի բովանդակությունը

I կիսամյակ

| Աշխատանքի ուղղվածությունը | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտ |
|---|---|---|---|---|
| *Աշակերտների մոտ զարգացնել գեղագիտական, ֆիզիկական, Ռազմա-հայրենասիրական դաստիարա-կությունը;* | Կահավորել դասասենյակը համաձայն համաճարակային ուղեցույցի: Տեղեկացնել աշակերտներին ուղեցույցի մասին: Տարվա համար կազմել հերթապահության ցուցակ: Ապահովել աշակերտ-դպրոց-ծնող սերտ կապը: | Զրույց նվիրված ուսուցչի տոնին: Կատարել 1-ից 5-ը Դասալսումների կատարում տարբեր առարկաներից: | Համագործակցում դասավանդող ուսուցիչների հետ: Ստուգել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակը: | Զրույց քննար երկրա և բնակ այլ աղետ մասին <<Սպ երկրա<br><br>Կատա դեկտե 5-ից 1 Զրույց տարվ դրա խորհր մասին |

II կիսամյակ

| Աշխատանքի ուղղվածությունը | հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հ |
|---|---|---|---|---|---|---|
| *Խնդիրները՝*<br><br>*Քաղաքացիական պատասխանա-տվության, արժանապատվության և ձևավորում, հարգանք* | ,Հայոց բանակի կազմավորումը է զրույց: Հին տոմարով Նոր տարի զրույց, քննարկում: | Աշակերտները կմասնակցեն համադպրոցական միջոցառմանը՝ <u>Տյառնընդառաջ</u>: | Զրույց մայրության և գեղեցկության վերաբերյալ: | Աշակերտները կմասնակցեն Հայոց ցեղասպանության նվիրված համադպրոցական միջոցառմանը՝ <<Հիշում եմ և պահանջում>> Խորագրով : | Մայիսյան եռատոն: Ուսումնական տարվա ավարտը, ձեռքբերումները: | Ին բե այ տ ըն ւմ |